ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

ՇԱԼԿԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ՂԶԼՔԻԼԻՍԱՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՋԵՌՈՒՑՈՒՄ է ԱՆՑԿԱՑՎԵԼ

Ուսումնական տարին սկսեցինք մեր շրջանի ցրտաշունչ ծմռանը պատրաստ:

Ինչ խոսք, մինչ այդ դպրոցը վառարանների միջոցով էր տաքացվում: Բայց լինելով բավական մեծ՝ այստեղ լիարժեք տաքություն ապահովելն իսկապես դժվար էր: Ուզում եմ շնորհակալություն հայտնել Ծալկայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի ղեկավարությանը մեզ հատկացրած 300 հազար լարիի համար, որի շնորհիվ, մեր դպրոցում կարգավորվեցին ոչ միայն ջեռուցման, այլեւ ջրամատակարարման, սանհանգույցի խնդիրները, եւ նույնիսկ դպրոցի մուտքի մոտ ծորակ տեղադրվեց: Այս ամենը կենսականորեն կարեւոր էր հատկապես համավարակի պայմաններում: Ասեմ, որ տեղադրել ենք նաեւ անվտանգության տեսախցիկներ, մեր երեխաների անվտանգությունն է'լ ավելի ապահովելու համար:

Ինչ վերաբերում է սոցիալական հեռավորությանը, ապա այդ առումով դպրոցում խնդիր չունենք, քանի որ մեր աշակերտների թիվն ընդամենը 153 է, շենքը՝ եռահարկ, տարածքը՝ մեծ: 2020-2021 ուսումնական տարին սկսեցինք սեպտեմբերի 15-ին, դասանենյակներում, տեսչական հատուկ խմբի կողմից ստուգման դրական գնահատականից հետո միայն: Ինչ խոսք, անհամեմատելի են դասասենյակում երեխաների անմիջական եւ օնլայն դասընթացները: Ուստի, ուրախ եւ շնորհակալ ենք դպրոց հաճախելու հնարավորության համար: Հույս ունենք, որ շնորհիվ մեր մունիցիպալիտետի, ուր առայսօր կորոնավիրուս չի գրանցվել, բնակչության կարգապահության շնորհիվ, դպրոցները կշարունակեն իրենց գործունեությունը դասասենյակներում:

Բնականաբար, բոլորի հետ միասին հեռավար դասընթացների դառը փորձն ունեցանք անցած ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում: Այդուհանդերձ, արդյունքներից գոհ ենք, մեր տասը շրջանավարտից, այդ թվում՝ մեկը ոսկե, երկուսն՝ արծաթե մեդալակիր, հինգն ընդունվեցին Վրաստանի եւ Հայաստանի բուհեր: Մեր դպրոցի մանկավարժների թիվը 23 է, այստեղից 13-ն ավագ մասնագետներ են:

2020-21 ուստարում առաջին դասարանցիների թիվը տասներեք է, անցած տարի ավելի շատ էին, բայց ուրախացնեմ, որ արդեն հաջորդում հունձքն իսկապես առատ է լինելու, ըստ նախատեսվածի, մեր դպրոց կհաճախի եւս 21 աշակերտ:

Սիրելիներ'ս, շնորհավորում եմ ուսումնական նոր մեկնարկի առիթով: Թեեւ բարդ է սկիզբը ու համավարակի հետեւանքներով պայմանավորված վախով լի, այդուհանդերձ շատ բան նաեւ մեզանից է կախված: Կարեւոր է յուրաքանչյուրիս պատասխանատվությունը՝ կյանքի նորմալ հուն նորից վերադառնալու համար:

ԱԶՆԻՎ ՈՍԿԱՆՅԱՆ
Ղզլքիլիսայի հանրային դպրոցի տնօրեն

ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԵՆՔ ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ ՎՐԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Սիրելի՛ դպրոցականներ, ուսանողներ, մանկավարժներ եւ, ընդհանրապես, կրթության ոլորտի բոլոր ներկայացուցիչներ, շնորհավորում եմ յուրաքանչյուրիդ:

Այս տարին փորձության շրջան է թերեւս ողջ աշխարհի համար, եւ ես, լիահույս եմ, որ այն հաղթահարելու ենք միանգամայն առողջ ու առավել հմտացած մեր առաքելության մեջ: Կորոնավարակը մեր երկրում, կառավարության ճիշտ քայլերի շնորհիվ, համեմատաբար լայն ընդգրկումներ չի ունեցել՝ զերծ պահելով Ծալկայի մունիցիպալիտետը եւս: Եվ ես երջանիկ եմ, որ մեր շրջանում սեպտեմբերի 15-ին երեխաները կրկին բացեցին իրենց կարոտած կրթօջախի դռները: 2020/21 ուսումնական տարին սկսեցինք դասասենյակներում՝ մեծ հույսեր փայփայելով, որ մեր համատեղ ջանքերի շնորհիվ, այլեւս չենք լքի դպրոցը: Պատասխանատվությունը մեծ է, հետեւաբար, դպրոցն առավելագույնս զինված պաշտպանիչ դիմակներով, ախտահանման լուծույթներով, մուտքի մոտ համապատասխան գորգերով: Մենք շնորհակալ ենք Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի, սպորտի ու նաեւ առողջապահության նախարարություններին՝ հետեւողականության, հատկացվող պարագաների եւ, առհասարակ մշտական ուշադրության համար:

Բարեբախտաբար, դպրոցում խնդիրներ չունենք: Լիարժեք է մանկավարժական կազմը, ապահովված ենք ինչպես Վրաստանի կրթության նախարարության, այնպես էլ՝ Հայաստանից տրամադրվող «Հայոց լեզվի եւ գրականության» դասագրքերով:

Անցած ուսումնական տարում Օզնիի դպրոցն ուներ 66 աշակերտ, որից 5-ը՝ շրջանավարտ: Այդ 5-ից Գոռ Սիմոնյանն արժանացավ ոսկե մեդալի, Ալինա Ավագյանը՝ արծաթե: Գոռ Սիմոնյանն արդեն իսկ Թբիլիսիի Իլիայի պետական համալսարանի ուսանող է: Նույն բուհն է ընդունվել նրա համադասարանցի՝ Այծեմնիկ Ղուբասարյանը: Իսկ մնացած 3-ը ուսումը շարունակելու են Հայաստանում:

Այս տարի առաջին դասարանցիների թիվը 4 է՝ 3 տղա, 1 աղջիկ: Իհարկե, ցավում եմ, որ քիչ են, բայց փորձելու ենք այնպես անել, որ չորսն էլ հետագայում արժանի մարդ ու մասնագետ դառնան:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ՝ բոլորիս մաղթելով առողջ ու բովանդակալից ուսումնական առօրյա:

ՌԱԶՄԻԿ ՀԱՆԵՍՅԱՆ
Օզնիի հանրային դպրոցի տնօրեն

Ծալկայի մունիցիպալիտետ

ՄԻՐԶՈԵՎԿԱ, ՇԱՐՈՒՆԱԿԻ'Ր ՀՊԱՐՏԱՆԱԼ ՔՈ ԴՊՐՈՑՈՎ

Տարիներ առաջ «Վրաստան» թերթում տպագրվեց արժանահիշատակ բանաստեղծուհի ու հրապարակախոս Անահիտ Բոստանջյանի մի հետաքրքիր հոդված՝ «Միրզոեւկա, հպարտացի'ր քո դպրոցով» վերնագրով: Արդեն այսօր գյուղը եւ դպրոցի մանկավարժական կազմը հպարտությամբ կարող է հավելել՝ «Դպրո'ց, հպարտացի'ր քո սաներով»: Ի՞նչը ուսուցչի համար կարող է լինել առավել կարեւոր, քան կատարած աշխատանքի արդյունքը, երբ զգում ես, որ ցանքդ, որն անձնուրացությամբ ու ջերմությամբ, սիրով եւ ակնածանքով ցանել ու խնամել ես, այժմ ծլարձակել եւ բերք է տալիս, երբ աշխատանքը, որին նվիրվել ես մինչեւ վերջ, ստանում է իր արժանի գնահատականը:

Չնայած համավարակով պայմանավորված իրավիճակի եւ մանավանդ, որ Մառնեուլիի մունիցիպալիտետն ամբողջությամբ շրջափակված էր՝ հայտարարվելով կարմիր գոտի, եւ դպրոցներն անցել էին հեռավար ուսուցման, իսկ շատերը վախով ու կասկածով էին մոտենում հեռավար ուսուցմանը՝ երկմտելով նրա հաջողության մեջ, մեր դպրոցի 7 շրջանավարտներից 5-ը՝ է.Մազմանյանը, Ա.Իոսիպովը, Վ.Խուդաեւը, է.Խաչատրյանը, Ս.Չիչյանը, այդուհանդերձ կարողացան ընդունվել Վրաստանի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ, ընդ որում նրանցից 3-ը՝ է.Մազմանյանը (ոսկե մեդալակիր, Թբիլիսիի պետական համալսարան), Ա.Իոսիպովը (ոսկե մեդալակիր) եւ է.Խաչատրյանը (Տեխնիկական համալսարան), ստացել են 100 տոկոս ֆինանսավորում:

Եվ ահա, մեկնարկեց նորը՝ նոր ձեռքբերումների սպասելով: Դպրոցի մանկավարժական կազմը շնորհավորում է իր սաներին եւ մաղթում նորանոր հաջողություններ:

ԷԴԳԱՐ ՄԱՔՄԱՆՅԱՆ
Թբիլիսիի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի նախապատրաստական կուրսի ուսանող

Մեր թղթակից

ԲԱԹՈՒՄԻԻ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹԻՎԸ ՏԱՐԵՑՏԱՐԻ ԱՃՈՒՄ է

- Ինչպես հայտնի է, Աջարիայի Ինքնավար Հանրապետությունն այս պահին ամենախոցելին է մեր երկրում կորոնավիրուսի դեպքերի մեծաթվության տեսանկյունից: Դպրոցները ոչ միայն հեռավար ուսուցմամբ են մեկնարկել, այլեւ հոկտեմբերի 1-ից, երբ որոշ քաղաքներում գոնե տարրական դասարաններն անցնելու են առկա ուսուցման, Աջարիայում, միեւնույն է, շարունակելու ենք հեռավար,- մեզ հետ զրույցում ասաց Բաթումիի թիվ 4 հանրային դպրոցի հայոց լեզվի ուսուցչուհի Սաթենիկ Դանիելյանը:

- Ինչպես նախորդ ուսումնական տարեվերջը, այնպես էլ՝ նորի սկիզբը որոշակի դժվարություններով ու ոչ լիարժեքությամբ է պայմանավորված,- ասաց Սաթենիկը եւ շարունակեց:- Այդուհանդերձ, փորձում ենք հնարավորին չափ մեր ուժերն ուղղորդել երեխաների կրթմանն ու զբաղվածությանը: Երեւի «Վրաստանի» ընթերցողը գիտի, որ արդեն երեք տարի է՝ Բաթումիի թիվ 4 հանրային դպրոցում հայկական դասարան է բացվել, ուր 1-ինից մինչեւ 12-րդ դասարանի աշակերտները հնարավորություն ունեն ամեն օր սերտել նաեւ մայրենին ու գրականությունը: Առաջին զանգը, թեկուզ հեռավար, բնականաբար հնչեց մեր փոքրիկների համար եւս: Ուսումը սկսվեց սեպտեմբերի 15-ից:

Սեպտեմբերի 18-ին, ավանդույթի համաձայն, 1-3-րդ դասարանցիներն այցելեցին Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցի, ուր ստացան Վիրահայոց թեմի Աջարիայի, Գուրիայի եւ Իմերեթիի հայության հոգեւոր հովիվ Տ. Արարատ Գումբալյանի օրհնությունը: Երեխաների համար նաեւ փոքրիկ հյուրասիրություն էր կազմակերպվել աշխույժ մթնոլորտ ստեղծելու համար:

Բաթումիում ուրախությամբ փաստում են, որ վրաց-հայկական դասարաններում աշակերտների թիվը տարեցտարի ավելանում է:

ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՉԱՆԱԽՉԻԻ ԴՊՐՈՑԻ ՆՈՐ ՇԵՆՔԻ ՀԻՄՔ՝ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Շնորհավոր ուսումնական տարի, թող այն միտված լինի դեպի բարին ու լուսավորը, դեպի մարդկությանը պիտանի լինելու անհրաժեշտությունը:

Չանախչիում ուսումնական տարին այն նույն ոգեւորությամբ սկսեցինք, ինչ նախորդ տարիներին, չնայած որ, ավանդական միջոցառում չկար: Իրականում, գյուղի երեխաների համար դպրոցը շարունակում է մնալ այն միակ վայրը, ուր հնարավոր է հաճախել: Երեւի այդ է պատճառը, որ մեր իննամյա դպրոցի տասնինը աշակերտը եւ այդ թվում՝ չորս առաջին դասարանցիները, առավել պատասխանատվությամբ են մոտենում համավարակի պայմաններում դպրոց հաճախելու իրենց առավելությանը՝ հետեւելով մանկավարժների բոլոր ցուցումներին:

Ինչպես գիտեք, մեր դպրոցի պարապմունքներն ընթանում են տնակներում:

Դպրոցի շենքը կառուցվել է 1927 թվականին եւ ամբողջությամբ վթարվել 1988 թվականի երկրաշարժի հետեւանքով: Այս տարիների ընթացքում անընդհատ խոսել ենք շենքի անհրաժեշտության մասին եւ ուրախ ենք, որ վերջապես նոր շենքն իրականություն է դառնալու: Հին դպրոցի տարածքում նորի հիմքն արդեն գցված է, շինաշխատանքներն ընթացքի մեջ են, ու պատրաստ է նախագիծը՝ միահարկ, շատ գողտրիկ ու ժամանակակից շենք է լինելու: Սա, բնականաբար, կնպաստի մեր երեխաների առաջադիմությանը ու նաեւ կկանխի գյուղի բնակչության արտահոսքը:

Այս ուրախալի իրադարձությանը սպասում է ամբողջ գյուղը, ուստի նաեւ տարվա մեկնարկն այդ ուրախ սպասումի տրամադրությամբ էր համակված: Տարին սկսեցինք առկա ուսուցմամբ՝ դասասենյակներում: Մեր առաջին դասարանցիներին նվիրեցինք բուքեր եւ դպրոցի կողմից՝ գրենական պիտույքներ: Նրանք եկել էին սպիտակ ու սեւ համազգեստներով, երջանիկ ծնողների ուղեկցությամբ, թեեւ շենք մտան արդեն ինքնուրույն ու վստահ՝ մյուսների հետ միասին անցնելով ջերմաստուգում եւ ախտահանում: Աշակերտության սակավաթվությունը, կարելի է ասել, օգնեց դասապրոցեսն ըստ համապատասխան հանձնարարականների կազմակերպելու համար: Բոլոր դասարաններն ապահովված են սանիտարահիգիենիկ համապատասխան պարագաներով:

Մնում է միայն առողջություն մաղթել բոլորիս ու նաեւ բարձր պատասխանատվություն: Համավարակն առավել ընդգծեց, որ գիտելիքը հույժ կարեւոր է ցանկացած բնագավառում, ուստի մեր երեխաներին ուսումնառության առատություն եմ մաղթում:

ՄԱՆԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Մառնեուլիի մունիցիպալիտետի Չանախչի գյուղի իննամյա դպրոցի տնօրեն

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԸ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ԼԱՐԻԻ ԱՐԺԵԶՐԿՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Արդեն մի քանի օր է, ինչ Վրաստանի ազգային տարադրամը՝ լարին, անկում է ապրում ամերիկյան դոլարի, եվրոպական եվրոյի նկատմամբ: Սեպտեմբերի 25-ին, արձանագրվեց լարիի պատմության ամենառեկորդային անկումը՝ ներկայիս պաշտոնական փոխարժեքը 1 դոլարի դիմաց 3,2537 լարի է, 1 եվրոյի դիմաց՝ 3,8267 լարի:

Վրաստանի ազգային արժույթի պատմության մեջ եվրոպական արժույթը երբեք այսքան թանկ չի եղել: Ավելին, կոմերցիոն բանկերում եւ երկրի տարադրամի փոխանակման կետերում արտարժույթի արժեքը մի փոքր ավելի բարձր է, քան պաշտոնական փոխարժեքը:

Մինչ այդ, լարիի ռեկորդային նվազում տեղի էր ունեցել 2020 թվականի մարտի 27-ին՝ համավարակի սկզբից անմիջապես հետո: Այն ժամանակ 1 եվրոյի պաշտոնական փոխարժեքը կազմում էր 3,8159 լարի, ինչը 1 թեթրիով զիջում էր այսօրվա տվյալներին:

Այն, որ գլոբալ համավարակը ազդեցություն էր գործելու համաշխարհային էկոնոմիկայի, հետեւաբար, աշխարհում շրջանառվող տարադրամների վրա, ակնհայտ փաստ էր, թեպետ, մասնագետների գնահատմամբ, այդ ազդեցությունը, բացասական առումով, գերազանցեց բոլոր կանխատեսումները: Հիշեցնենք, որ լարիի անկումը սկսվեց կորոնավիրուսի դեմ պայքարի շրջանակներում կառավարության կողմից ընդունած սահմանափակումների (արտակարգ դրություն, սահմանների փակում, կարանտին եւ այլն) կիրարկումից անմիջապես հետո: Իր ազդեցությունն ունեցավ նաեւ Վրաստանի էկոնոմիկայում եկամտային այնպիսի աղբյուրից տարադրամային ներարկումների հոսքի դադարեցումը, ինչպիսին զբոսաշրջության ոլորտն էր: Բավական է նշել, որ անցյալ տարի երկիր այցելեց գրեթե 9,5 միլիոն զբոսաշրջիկ, եւ միայն այդ ոլորտից պետական բյուջեն ստացավ գրեթե 10 միլիարդ դոլարի եկամուտ: Համավարակը եւ դրանով պայմանավորված սահմանափակումները էականորեն նվազեցրին նաեւ էկոնոմիկայի մյուս ճյուղերի եկամուտները: Լարիի արժեզրկումը պայմանավորող գործոնների թվում կարելի է նշել նաեւ պետության կողմից տնտեսական ճգնաժամի այս ծանր պայմաններում բնակչությանը տրվող սոցիալական օգնությունը: Նշենք, որ համավարակի բռնկումից առաջ՝ 2020 թվականի փետրվարի 23-ին, 1 եվրոյի պաշտոնական փոխարժեքը 3,0571 լարի էր, իսկ մեկ ԱՄՆ դոլարը՝ 2,82999 լարի: Այս ընթացքում լարիի փոխարժեքը դոլարի նկատմամբ արժեզրկվել է 42 թեթրիով, իսկ եվրոյի նկատմամբ՝ 77 թեթրիով:

Միայն սեպտեմբերին լարին դոլարի նկատմամբ արժեզրկվել է 18, իսկ եվրոյի նկատմամբ՝ 16 թեթրիով:

Լարին կայունացնելու նպատակով, Ազգային բանկը օրերս աճուրդի հանեց ամերիկյան դոլարի հերթական գումարը՝ 40 միլիոնի չափով: Ընդհանուր առմամբ, Ազգային բանկը լարիի կուրսի կայունացման համար ընթացիկ տարվա սկզբից արդեն վաճառել է 420 միլիոն ԱՄՆ դոլար:

Ազգային տարադրամի արժեզրկման կանխմանն ուղղված միջոցառումներ է անցկացնում նաեւ Վրաստանի կառավարությունը: Մասնավորապես, բանակցություններ են տարվում Արժույթի միջազգային հիմնադրամի, Ասիայի Զարգացման բանկի եւ միջազգային ֆինանսական մյուս կազմակերպությունների հետ, վարկերի եւ դրամաշնորհների ապահովման, երկրի էկոնոմիկայում եւ ֆինանսական հատվածում տարադրամային նոր ներարկումների իրականացման նպատակով: Ներկայումս կառավարության տնտեսական թիմը միջոցներ է ձեռնարկում էկոնոմիկայի փրկության, երկրի տնտեսական անկումը կանգնեցնելու ուղղությամբ:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՃՆՈՒՆԴՈՎ ԹԲԻԼԻՍՅԻ ԱՐՄԱՅԻՍ ՔԱՄԱԼՈՎԸ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ՝ «ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԵՎՍԿՈՒ» ՇՔԱՆՇԱՆԻ

Մոսկվայի պետական համալսարանի համալսարանական կլինիկայի տնօրեն, 59-ամյա Արմայիս Քամալովը պարգեւատրվել է Ռուսաստանի պետական քաղաքացիական ամենաբարձր՝ «Ալեքսանդր Նեւսկու» շքանշանով:

Նշենք, որ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից համավարակների դեմ պայքարում ունեցած վաստակի, բուժման առաջադեմ մեթոդների մշակման եւ կորոնավիրուսի դեմ պայքարում ունեցած մեծ ավանդի ու մասնագիտական պարտքը կատարելիս ցուցաբերած անձնազոհության համար պարգեւներ ստացան նաեւ այլ բժիշկներ ու բուժքույրեր:

Ակադեմիկոս Արմայիս Քամալովը ծնվել է թբիլիսահայերի ընտանիքում, իսկ դպրոցն ավարտելուց հետո, տեղափոխվել Մոսկվա: Այնտեղ էլ ավարտել է ինստիտուտը:

- Ես բժիշկ եմ, ոչ թե գործարար, թեեւ գտնում եմ, որ պետք է միշտ ունենալ մարդկանց օգնելու հնարավորություն: Իհարկե, բժիշկը, առաջին հերթին, մարդկանց օգնում է իր գիտելիքներով, սակայն գոյություն ունեն նաեւ բարեգործական նախագծեր, որոնք շատ մոտ են իմ հոգուն:

Թբիլիսիի Առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եկեղեցին, որի վերաբացմանը մի քանի տարի առաջ՝ 2015 թվականին, մասնակցեցի նաեւ ես իմ ընտանիքի անդամների հետ, ինձ համար շատ հարազատ է: Այնտեղ է տեղի ունեցել ծնողներիս ամուսնական ծիսակարգը, այստեղ ենք մկրտվել նաեւ ես եւ եղբայրս, ժամանակին այդտեղ էինք լինում մեր ծնողների հետ:

Եկեղեցու վերաբացման միջոցառմանը մասնակցում էին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը, Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին, ով նշանակալի ավանդ ներդրեց այդ եկեղեցու վերածննդի գործում:

Իսկ հիմա էլ նրա օգնությամբ կառուցվում է Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի շենքը: Նման նախագծի գլխավոր նախաձեռնողն ու հովանավորը Ռուբեն Վարդանյանն է, ով վիթխարի ավանդ ունեցավ եւ ունի հայոց պատմության ու մշակույթի պահպանման գործում,- մեզ հետ զրույցում պատմում է Արմայիս Քամալովը:

- Յուրաքանչյուր այցելություն Թբիլիսի ինձ համար տոն է: Թբիլիսիի գեղեցկությունը միշտ կապված է եղել այնտեղ ապրող մարդկանց, այն յուրատեսակ կոլորիտի հետ, որն այնտեղ եղել է: Եվ, կարեւոր չէ, ինչ ազգության ես պատկանում, կարեւորը, որ դու թբիլիսցի ես,- ասում է ակադեմիկոսը՝ խոսելով իր ծննդավայր Թբիլիսիի մասին:

Անդրադառնալով Թբիլիսիում Քամալովների բնակության թեմային՝ Արմայիս Քամալովը նշում է.

- Հորս կողմից պապիս արմատները Շուշիից են: Պապս սովորել է Թբիլիսիի Մանթաշովյան ուսումնարանում: 13 տարեկանից սկսել է աշխատել՝ քաղաքում դառնալով հարգված եւ ճանաչված անձնավորություն: 40 տարի գլխավորել է հենց «Թբիլիսի» հյուրանոցի դիմացի մայթին, Շոթա Ռուսթավելու պողոտայի վրա գտնվող բյուրեղապակու խանութը: Նրան անվանում էին «Բյուրեղապակու Արամայիս»:

Արմայիս Քամալովը ընտանիքի հետ միասին Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցու գավթում (2015թ.)

Պապս բարձրագույն կրթություն չէր ստացել, խանգարել էին հեղափոխությունը եւ դրանից բխող հետեւանքները, թեեւ արել էր ամեն հնարավորը, որպեսզի երեխաներն ու թոռները կրթություն ստանային: Հայրս եւ հորեղբայրս բարձրագույն կրթություն ստացել են Թբիլիսիում, իսկ ես ու եղբայրս մեկնեցինք Մոսկվա տեղի բժշկական ինստիտուտում սովորելու, քույրս էլ այնտեղ ավարտեց օտար լեզուների ինստիտուտը,- մեզ հետ զրույցում հիշում է ակադեմիկոս Արմայիս Քամալովը:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՏԵՍԱՀՈԼՈՎԱԿ

ԼԵԴԻ ԳԱԳԱՆ ԵՎ... ՓԱՐԱՋԱՆՈՎԸ

Ամերիկյան ճանաչված երգչուհի Լեդի Գագան նոր տեսահոլովակ է նկարահանել Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի մոտիվներով:

Երգչուհին իր վեցերորդ ստուդիայի Chromatica ալբոմում ներառված 911-ի վրա նկարահանված երգի տեսագրությունը սեպտեմբերի 18-ին հրապարակեց YouTube-ում եւ կարճ ժամանակահատվածում հավաքեց ավելի քան 6 միլիոն դիտորդ:

1968 թվականին Սերգո Փարաջանովի կողմից նկարահանված «Նռան գույնը» ֆիլմը Ֆեդերիկո Ֆելլինին, Ժան Լյուկ Գոդարը եւ Միքելանջելո Անտոնիոնին հռչակեցին որպես կինոյի գլուխգործոց: Ֆիլմում գլխավոր դերը կատարում է Սոփիկո Ճիաուրելին:

ՆՈՐՈՒՅԹ

TBC-ԻՆ ՍԿՍԵՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԱԿՑԻԱՆ

TBC-ին սկսել է դրամական փոխանցումների ակցիան: Սպառողին, ով բանկի միջոցով փող է առաքում կամ ստանում, կտրվի հնարավորություն որպես նվեր ստանալ գերպարգեւ՝ 20 000 լարի կամ ընտրել է 20 000 ակնթարթային նվերներից մեկը:

TBC-ի դրամական փոխանցումների ակցիան սկսվեց սեպտեմբերի 18-ից եւ կշարունակվի մինչեւ դեկտեմբերի 25-ը: Սպառողները ավտոմատ ներգրավվում են ակցիայում: Փոխանցած գումար ստացող յուրաքանչյուր երրորդ սպառողը կարող է որպես նվեր ակնթարթային պարգեւ ստանալ, այդ թվում՝ PSP-ի, «Նիկորայի» եւ «Սուփթա սախլիի» վաուչերներով (մինչեւ 50 լարի) դրամական պարգեւով 50 եւ 100 նոմինալով, համացանցի մեգաքարտով եւ 0 տոկոսանոց կոմիսիոն տոկոսադրույքով համացանց եւ մոբայլ բանկով կատարած կոմունալ վճարումների համար:

Ակցիայի գլխավոր պարգեւը՝ 20 000 լարին, կստանան այն երկու սպառողները, ովքեր TBC-ի բանկի միջոցով երեք եւ ավելի անգամ կիրականացնեն դրամական փոխանցումներ կամ գումարի ստացում:

TBC-ում դրամական գումարի կանխիկացումը հնարավոր է հեշտությամբ, առանց տանից դուրս գալու, համացանցով եւ մոբայլբանկի միջոցով www.tbconline.ge, թեժ գծին զանգահարելով՝ 0320 272727:

Գումարի փոխանցումը հնարավոր է TBC-ի բանկի ցանկացած մասնաճյուղից եւ սերվիս-կենտրոնից:

TBC-ի բանկում սպառողը հնարավորություն ունի գումարը ստանալ եւ փոխանցել հետեւյալ միջազգային փոխանցումներով՝ INTEL EXPRESS, RICO GRAM, VONEYGRAM, ZOLOTAYA KORONA, WESTERN UNION, UNISTRAM RIA, CONTACT, Իսրայելի փոխանցումները World com finance:

Ակցիայի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունները ներկայացված է http://bit.ly/moneytransfercampaign կայքէջում:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ

«Արմենիան Արմ» հայրենասիրական հասարակական կազմակերպությունը, ՀՀ պաշտպանության նախարարության հետ, սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Հանրապետության Անկախության 29-րդ տարեդարձի կապակցությամբ, Երեւան քաղաքում կազմակերպեց մի շարք մարզական եւ մշակութային միջոցառումներ:

Երեւանի Ազատության հրապարակի հարակից տարածքում անցկացվեցին K1 ֆեդերացիայի մասնակիցների բացօթյա մարզումներ. մոտոերթ՝ Երեւանի կենտրոնից դեպի Հաղթանակ զբոսայգի, Մայր Հայաստան թանգարանի հարակից տարածքից՝ հեծանվավազք դեպի Եռաբլուր զինվորական պանթեոն, ամենագնացներով երթ Եռաբլուրից դեպի Ազատության հրապարակ:

Կազմակերպվեց նաեւ քայլերթ Ազատության հրապարակից դեպի Աբովյան փողոց, որին մասնակցեցին եւ կատարումներով հանդես եկան «Երեւանյան թմբուկներ» խումբը, «Միլեն» շոու բալետը, Հայաստանի պաշտպանության նախարարության զինվորական նվագախումբը: Ցուցադրական ելույթով հանդես եկավ նաեւ ՀՀ-ի ՊՆ պատվո պահակախումբը:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ՝ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Հայաստանի Անկախության օրվա առթիվ շնորհավորական ուղերձներ են հղել ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, Չինաստանի նախագահ Սի Ծինփինը, Իրանի նախագահ Հասան Ռոհանին:

Շնորհավորական ուղերձներ են հղել նաեւ Միացյալ Թագավորության թագուհի էլիզաբեթ Երկրորդը, Բուլղարիայի վարչապետ Բոյկո Բորիզաբեթ Երկրորդը, Բուլղարիայի վարչապետ Բոյկո Բորիսովը, Ղազախստանի նախագահ Կասիմ Ժոմարտ Տոկաեւը, Ղազախստանի առաջին նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը, Եգիպտոսի վարչապետ Մուստաֆա Մադբուլին, Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնը, Արաբական Միացյալ Էմիրությունների փոխնախագահ, վարչապետ եւ Դուբայի կառավարիչ Շեյխ Մուհամմադ բին Ռաշիդ Ալ-Մաքթումը, Զինված ուժերի գերագույն փոխհրամանատար Մուհամմադ Բին Զայեդ Ալ Նահյան, Իրաքի նախարարների խորհրդի ղեկավար Մուստաֆա Ալ-Քազիմին, Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովը,Մոլդովայի վարչապետ Իոն Կիկուին, Ինդոնեզիայի նախագահ Ջոկո Վիդոդոն, ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ստանիսլավ Զասը:

ԵՐԿԻՐԸ ՆՇԵՑ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 29-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հայաստանի երրորդ Հանրապետությունը սեպտեմբերի 21-ին նշեց Անկախության 29-րդ տարեդարձը: 29 տարի առաջ հայ ժողովուրդը հանրաքվեի միջոցով իր վճռական «այո»-ն ասաց Հայաստանի անկախությանը: Հայաստանի չափահաս բնակչության 95% մասնակցության պարագայում ընտրողների 99,5%-ը «Համաձա՞յն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի ժողովրդավարական անկախ պետություն՝ ԽՍՀՄ կազմից դուրս» հարցին դրական պատասխան տվեց: Երկու օր անց՝ սեպտեմբերի 23-ին, երկրի Գերագույն Խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ, ինքնիշխան հանրապետություն:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 21-ին, Երեւանի Մատենադարանում, Անկախության 29-րդ տարեդարձին նվիրված միջոցառումների շրջանակներում, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկայացրեց Հայաստանի վերափոխման ռազմավարությունը՝ մինչեւ 2050 թվականը Հայաստանի զարգացմանն ուղղված համահայկական օրակարգը:

Նիկոլ Փաշինյանը նախ առաջարկեց այսօրվա իրականությանը նայել 30 տարի առաջվա աչքերով:

- Արդյոք մենք այն ժամանակ մեր մտապատկերում, մեր օրակարգում ձեւավորե՞լ ենք միտք, թե ինչպիսի՞ն ենք մենք պատկերացնում ՀՀ-ն 2020 թվականին: Ցավոք, պետք է արձանագրեմ, որ մեր իրականության մեջ՝ առնվազն պետական մակարդակում, առնվազն 30 տարվա կտրվածքով այդպիսի ռազմավարություն չի եղել,- ասաց վարչապետը:

Նրա կարծիքով, սա գուցե նաեւ պայմանավորում է այսօրվա բազմաթիվ խնդիրները:

- Հայաստանի վերափոխման 30 տարվա ռազմավարությունը շատ կարեւոր է մեզ՝ հասկանալու, թե մենք ինչ ենք ուզում, ուր ենք գնում եւ ինչպիսին ենք պատկերացնում մեր ՀՀ-ն՝ 2050 թվականին,- շեշտեց Փաշինյանը:

Վարչապետը կարեւորեց արձանագրել, որ ռազմավարությունը պետք է ունենա գործնական նշանակություն:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՍՐՎՈՒՄ Է

Հայաստանում կորոնավիրուսի հետ կապված իրավիճակը կրկին սրվում է: Այդ մասին սեպտեմբերի 24-ին կառավարության նիստում նշեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետի խոսքով՝ սա, իհարկե, կապված է մարդկանց շարժողունակության ավելացման հետ:

- Եվ ինչպես ենք մենք այս իրավիճակին վերաբերվում: Մեր դիրքորոշումը շարունակում է մնալ նույնը, որ մենք պետք է ապրենք կորոնավիրուսի հետ զուգահեռ: Եվ այստեղ շատ բան կախված է մեզնից յուրաքանչյուրի անհատական պատասխանատվությունից: Իհարկե, պետք է նաեւ վարչական խիստ մեթոդներ կիրառվեն: Եվ պայմանավորվել ենք, որ տեսչական մարմիններն ու ոստիկանությունը կուժեղացնեն հսկողությունը կանոնների պահպանման նկատմամբ: Բայց մյուս կողմից մենք պետք է հասկանանք, որ ունենք կարմիր գծեր,- ասաց վարչապետը՝ ավելացնելով, որ կարմիր գիծն այն է, երբ հիվանդանոցային կարողությունները կսպառվեն, ուստի այդ ժամանակ էլ կառավարությունը պետք է այլ որոշումներ կայացնի:

Նիկոլ Փաշինյանն ընդգծեց, որ հուլիսին ծավալված հիվանդանոցային մեծ կարողությունները, որոնք հետ են ծավալվել, պատրաստ են ցանկացած պահի հետ վերադառնալ կորոնավիրուսի դեմ պայքար ծավալելու համար:

ՆՍՏԱՎԱՅՐԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻՑ ՏԵՂԱՓՈԽՎՈՒՄ Է ՇՈՒՇԻ

2022 թվականի մայիսի 9-ին, բերդաքաղաքի ազատագրման 30-ամյակի առթիվ, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նստավայրը մայրաքաղաք Ստեփանակերտից կտեղափոխվի Շուշի:

Ինչպես նշեց Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը, սույն որոշումն ունի ինչպես քաղաքական ու կիրառական, այնպես էլ՝ այդ պատմական ու հաղթական քաղաքը յուրովի վերարժեւորելու խորհրդանշական նշանակություն:

2 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի եւ Ասիական զարգացման բանկի միջեւ նախատեսվող «COVID-19-ին արյագանքման ծրագիր» դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում Հայաստանի կառավարությունը կստանա 2 միլիոն ԱՄՆ դոլարի դրամաշնորհ:

Դրամաշնորհի միջոցները կօգտագործվեն կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համավարակի հետեւանքով տուժած առաջնային գծի բուժաշխատողների եւ բնակչության համար, մասնավորապես՝ պաշտպանիչ անչնական սարքավորումների, թեստավորման կոմպլեկտների, ընդհանուր բժշկական պարագաների եւ այլ անհրաժեշտ միջոցների ձեռքբերման համար:

ԵՎՍ 30 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ԴԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի կառավարությունը հավանություն տվեց «Հայաստանի եւ Եվրոպական հանձնաժողովի միջեւ «Աջակցություն Հայաստանում դատական ոլորտի բարեփոխումների իրականացմանը. փուլ I» ֆինանսավորման համաձայնագրի ստորագրման առաջարկությանը:

Համաձայնագրի նախագծով, այդ գումարից 3 մլն եվրոն միտված է տեխնիկական աջակցությանը (հիմնականում խորհրդատվական ծառայություններին), իսկ մնացած 27 մլն-ը՝ երեք հավասար մասնաբաժիններով հատկացվելու է պետական բյուջեին, ըստ համաձայնագրի ընդհանուր եւ հատուկ պայմանների իրականացման:

ՀԱՅ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ՝ «ԿՈՎԿԱՍ- 2020» ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սեպտեմբերի 21-26-ը Ռուսաստանի զինված ուժերի «Կապուստին Յար» զորավարժադաշտում անցկացվում են «Կովկաս-2020» ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժություններ, որի շրջանակում խաղարկվում են ահաբեկչական գործողությունների հակազդման եւ համատեղ գործողությունների իրականացման սցենարներ:

Զորավարժությանն ընդգրկված են մինչեւ 250 տանկ, 450 հետեւակի մարտական մեքենաներ եւ զրահատեխնիկա, մինչեւ 200 հրետանային եւ համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր: Մասնակիցների թվում է նաեւ հայկական զինուժերի ստորաբաժանումը:

ԸՆԴԼԱՅՆՎԵԼ ԵՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը 2019 թվականից բյուջետային ֆինանսավորմամբ էականորեն ընդլայնել է հայերենի ու հայագիտական առարկաների դասավանդման աջակցության ծրագրերը:

Ինչպես տեղեկացնում է գերատեսչությունը, «Ծրագիրն արդեն 2020-2021 ուստարում իրականացվում է 8 պետության 10 հաստատություններում, նախկին 4-ի փոխարեն՝ ներկայում ընդգրկելով Պրահայի Կարլովի (Չեխիայի), Բուխարեստի (Ռումինիա), Վենետիկի Կա, Ֆոսկարի, Հռոմի Լա, Սապիենցա (Իտալիա), Զալցբուրգի (Ավստրիա), Կահիրեի (Եգիպտոս), Քենեդի (Արգենտինայի) համալսարանները, Պոտսդամի Լեփսիուսի տուն-թանգարանը եւ Հալլեի «Մեսրոպ» հայագիտական հետազոտությունների կենտրոնը (Գերմանիա), եւ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը (Ռուսաստան): Ծրագրի իրագործման նպատակով ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումն հիմնականում իրականացվում է տվյալ համալսարանի եւ ՀՀ դեսպանությունների միջեւ կնքված հուշագրերի կամ համաձայնագրերի հիման վրա:

Դասավանդումն իրականացվում է հիմնականում տեղի հայագիտական ոլորտի կադրերի կողմից, երբեմն նաեւ Հայաստանից գործուղված մասնագետի միջոցով (Բուխարեստի համալսարան):

Հաստատություններում հայերենի իրավական կարգավիճակը տարբեր է. Վենետիկի Կա, Ֆոսկարի համալսարանում հայերենը դասավանդվում է 3 ուսումնական տարի՝ լեզվաբանների համար: Բուխարեստում այն ընտրովի առարկա է: Պրահայում եւ Զալցբուրգում դասավանդվում են նաեւ այլ հայագիտական առարկաներ՝ «Հայոց պատմություն», «Հայ քրիստոնեության պատմություն», «Հայ գրականություն» եւ այլն:

2020 թվականին առաջին անգամ ֆինանսավորվել են հետազոտական աշխատանքներ, որի նպատակով հուշագիր է ստորագրվել Պոտսդամի Լեփսիուսի տուն-թանգարանի ինստիտուտի եւ Հալլեի «Մեսրոպ» հայագիտական հետազոտությունների կենտրոնի հետ:

Հարկ է նշել, որ ԿԳՄՍՆ-ն հետեւողական աշխատանքներ է տանում արտերկրում հայագիտության ցանցի ընդլայնման ուղղությամբ»,- ասված է նախարարության տարածած հաղորդագրության մեջ:

ԵԿԵՂԵՑԻԱԿԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ

27.09.2020 Վարագա Սուրբ Խաչի տոն

Քրիստոնեական բոլոր եկեղեցիներն ամեն տարի մեծ հանդիսավորությամբ նշում են Խաչին նվիրված տոները: Բայց ի տարբերություն մյուս եկեղեցիների, Հայ եկեղեցին ունի նաեւ Խաչին նվիրված զուտ ազգային տոն, որը հայտնի է Վարագա Սուրբ Խաչ անունով: Այն միշտ տոնում են Խաչվերացից երկու շաբաթ անց, այսինքն՝ սեպտեմբերի 25-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը հանդիպող կիրակի օրը:

28.09.2020 Դավիթ Դվնեցու եւ Սուրբ վկաներ Դամբեոսի եւ Դամբեուհու հիշատակության օր

ԻՐԱՎԱԿԱՆ

ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԵՂԱԴՐԱՆՔՈՎ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է 11 ԱՆՁ

Սեպտեմբերի 23-ին Վրաստանի ներքին գործերի նախարարության կենտրոնական քրեական ոստիկանության դեպարտամենտի թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի գլխավոր վարչության եւ գլխավոր դատախազության աշխատակիցները, համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, մայրաքաղաքի Փոնիճալա թաղամասում ձերբակալել են 11 թմրավաճառների:

«Դատավորի որոշման հիման վրա կալանավորված են. 1986 թ. ծնված Ն. Ա.-ն, 1973 թ. ծնված Ի. Ա.-ն, 1987 թ. ծնված Կ.Ա.-ն, 1996 թ. ծնված Ա.Գ.-ն, 1967 թ. ծնված Դ. Փ.-ն, 1979 թ. ծնված Ս. Գ.-ն, 1999 թվականին ծնված Վ.Մ.-ն, 1979 թվականին ծնված Վ.Ա.-ն, 1971 թվականին ծնված Փ.Ա.-ն, 1985 թվականին ծնված Ռ.Ն.-ն եւ 1999 թվականին ծնված Է.Գ.-ն»,- ասված է ՆԳՆ-ն հաղորդագրության մեջ:

Գերատեսչության տեղեկատվությամբ, ձերբակալվածները մեղադրվում են թմրանյութերի ապօրինի գնման, պահման ու իրացման մեջ: Հանցագործությունը նախատեսում է 8-ից 20 տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկում:

Ձերբակալվածների անձնական տների խուզարկության ժամանակ, ոստիկանությունը առգրավել է հերոին թմրամիջոց, մեծ քանակությամբ գումար եւ բջջային հեռախոսներ:

Հետաքննությունը շարունակվում է Վրաստանի քրեական օրենսգրքի 260-րդ հոդվածով, ինչը նշանակում է խմբի կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես մեծ քանակությամբ թմրանյութերի ապօրինի գնում, պահում եւ իրացում:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ՆՈՐԱՑՎՈՒՄ Է ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ՊԱՐԿԸ

Սեպտեմբերի 23-ին Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն քաղաքապետարանում անցկացված ճեպասուլիսում հայտարարեց, որ Թբիլիսիի փողոցներում նոր՝ Ford մակնիշի 300 միկրոավտոբուսներ կերթեւեկեն, ինչպես նաեւ գործող 3000-ի փոխարեն կգործի 1200 միկրոավտոբուս:

- Հուլիսի 15-ին հայտարարվել էր գնումների մրցույթ, որի արդյունքում 300 միավոր միկրոավտոբուս է ձեռք բերվելու, որոնք աստիճանաբար փոխարինելու են արդեն հնացած, բայց գործող դեղին միկրոավտոբուսներին: Այս ուղղությամբ մրցույթն ավարտված է, պայմանագիրը կնքվել է սեպտեմբերի 18-ին: Մենք հաղթող ընկերություն ունենք, եւ 300 Ford մակնիշի միկրոավտոբուսները աստիճանաբար կմտնեն մայրաքաղաք: Փոխարինումը կտեւի շուրջ 180 օրացուցային օր,- նշել է Կախա Կալաձեն:

Թբիլիսիի քաղաքապետը նաեւ հիշեցրել է, որ սկզբնական շրջանում Թբիլիսիում գործում էր շուրջ 3000 միկրոավտոբուս, սակայն նոր բարեփոխումների համաձայն, դրանց թիվը կկրճատվի՝ հասնելով 1200-ի:

ՖՈՒՏԲՈԼ

ԹԲԻԼԻՍԻԻ «ԴԻՆԱՄՈՆ» ԵՎ «ԼՈԿՈՄՈՏԻՎԸ» ՄՐՑԱՊԱՅՔԱՐԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԻՆ, «ԱՐԱՐԱՏ-ԱՐՄԵՆԻԱՆ»՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԼԻԳԱՅԻ ՓԼԵՅ-ՕՖՖՈՒՄ

Սեպտեմբերի 24-ին անցկացվեցին ֆուտբոլի Եվրոպայի լիգայի որակավորման երրորդ փուլի հանդիպումները:

Ցավոք, այդ մրցաշարում Վրաստանը ներկայացնող թբիլիսյան «Լոկոմոտիվն» ու «Դինամոն» չկարողացան հաղթահարել արգելքն ու դուրս մնացին մրցապայքարից: «Լոկոմոտիվը» «Նուեւո էստադիո Լոս Կարմենես» մարզադաշտում հյուրընկալվեց իսպանական «Գրանադային» եւ երկու անպատասխան գնդակ ընդունեց սեփական դարպաս:

Որակավորման այդ փուլում ծայրաստիճան անհաջող հանդես եկավ Վրաստանի ամենահեղինակավոր ու ամենատիտղոսավոր Թբիլիսիի «Դինամո» թիմը, որը Ֆարերյան կղզիների չեմպիոն «Կլաքսիկ»-ի հետ մրցամարտում սեփական դարպասն ընդունած վեց գնդակին պատասխանեց միայն մեկ գոլով: Հատկանշական է այն փաստը, որ Ֆարերյան կղզիների բնակիչների թիվը զիջում է անգամ Թբիլիսիի Բորիս Պայճաձեի կենտրոնական մարզադաշտի հանդիսատեսի տեղերի թվին, եւ նման մրցակցից խայտառակ պարտությունը լուրջ հարված է վրացական ֆուտբոլի հեղինակությանը:

Ինչ վերաբերում է Եվրոպայի լիգայի որակավորման այդ փուլին մասնակից Երեւանի «Արարատ-Արմենիային», ապա թիմը սեփական հարկի տակ ընդունեց սլովենական «Ցելյե»-ին եւ լրացուցիչ ժամանակի 110-րդ րոպեին խփած գոլով նվաճեց Եվրոպայի լիգայի որակավորման չորրորդ փուլին մասնակցելու ուղեգիր՝ կրկնելով անցյալ տարվա ձեռքբերումը:

ՈՒԵՖԱ-ի Եվրոպայի լիգայի փլեյ-օֆֆում հոկտեմբերի 1-ին Երեւանում «Արարատ-Արմենիան» կխաղա սերբական «Ցրվենա Զվեզդա»-ի հետ:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Վրաց թագուհի: 5.Իտալացի օպերային կոմպոզիտոր: 8.Քաղաք Կիլիկիայում: 10.Կաթոլիկ եկեղեցու կենտրոնը: 13.Աչքի մաս: 16.Ուժ ու ...: 17.Ռաֆֆու գրական հերոս: 18.Ֆ. Շիլլերի դրամաներից՝ «... եւ խարդավանք»: 19.Շիրվանզադեի ստեղծագործություններից «Չար ...»: 20.Գերմանացի փիլիսոփա: 23.Բեռնակիր կենդանի: 26.Բեռլինում երիտթուրք Ջեմալ Ազիմի արդար դատավճռի հեղինակ ... Երկանյան: 27.Ցնորք, պատրանք: 28.Ծառի փուչ մասը: 29.Մկրտիչ Արմենի գրական հերոսուհի: 32.Ղազախստանի նախկին մայրաքաղաք: 33.Շոկոլադի հումքը: 35.Չհասկացող, անգետ: 37.Անձնական դերանուն (հոլովված): 39.Հանրահայտ կոմպոզիտոր ... Մանսուրյան: 42.Շոթա Ռուսթավելու գրական հերոսուհի: 44.Հայկական գինի: 45.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 47.Վառ կարմիրը: 48.Արեւի աստվածը Հին Եգիպտոսում: 50.Հոգեւորականի հարկաբաժին եկեղեցում: 53.Քիմիական մետաղ: 55.Քաղաք Ֆրանսիայում: 58.Արագարագ, շուտ, վռազ: 57.Բանջարանոցային բույս, բազիլիկ: 59.Աֆրիկյան պետություն: 60.Հայաստանի մայրաքաղաքներից: 61.Մրգի «մումիան»:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Վրաց թագավոր: 2.Ինդոնեզիայի մայրաքաղաքը: 3.Ֆրանսիացի երգահան: 4.Տափաստանային թռչուն: 5.Վերածննդի դարաշրջանի իտալացի գեղանկարիչ ... Վերոնեզե: 6.Ամերիկյան կինոռեժիսոր, դերասան, սցենարիստ: 7.Մարդկության նախահայրը: 9.Կաճառ: 11.Աչքի առաջ ունեցած տեսանելի դաշտը: 12.Թբիլիսիում ծնված, էվերեստի գագաթը նվաճած առաջին հայուհին ... Խարազովա: 14.Ընտանի ջրլող թռչուն: 14.Նար-Դոսի երկերից «Ես եւ ...»: 21.Չնկատվող, անտեսանելի: 22.Հայ ծանրամարտիկ Վահան ...: 24.Ղ.Աղայանի հեքիաթի հերոս: 25.Հուր, բոց: 26.Գրական ստեղծագործություն: 28.Որոնել, ման գալ: 30.Հայտնի դերասան ... Հովհաննիսյան: 31.Կրկին, դարձյալ: 34.Աչքի խոռոչը: 36.Վերջածանց: 38.Ժխտական նախածանց: 40.Աշխարհագրական վերջավորություն: 41.Հրուշակեղենի հայտնի ֆիրմա ... Քենդի: 43.Ֆրանսահայ հանրահայտ գրող: 46.Հոգնակիակերտ մասնիկ: 49.Ալ.Շիրվանզադեի գրական հերոսուհի: 51.Բժշկական գործիք: 52.Ամերիկացի կինոդերասանուհի, մոդել եւ երգչուհի: 54.Բագրատունի թագավոր: 57.Միշտ, հավիտյան:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Աչքածակ: 8.Առարկա: 9.Արկտիկա: 10.Ինկասո: 13.Խզբզանք: 17.Կածան: 18.Այրվածք: 21.Փափագ: 24.Ջեզի: 25.Կարատե: 27.Պարկ: 29.Նամ: 31.Ադամանդ: 34.Վարգ: 35.Սենատ: 36.Քիթ: 37.Հայ: 38.Թուրման: 39.Մակակ: 42.Խաս: 43.Վանո: 44.Շախմատ: 45.Մատակ: 48.Դեղ: 49.Սուլուգունի: 50.Նախկին: 51.Մինին:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Չարլզ: 3.Արտազ: 4.Արկան: 5.Պռունկ: 6.Ցրված: 7.Բարոն: 11.Կատար: 12.Սապատ: 14.Բարձ: 15.Ահազանգ: 16.Քոք: 19.Վեպ: 20.Ծիր: 21.Փալաս: 22.Փական: 23.Գերդտ: 26.Դավիթաշեն: 28.Կալանատուն: 30.Մաթուսաղա: 32.Մեղա: 33.Նանա: 37.Հավասի: 39.Մոմում: 40.Կատուն: 41.Կրկին: 46.Ագի: 47.Անի:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445